ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԳՆԱՊԻ ՄԵՋ Է

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր Հայաստանում «բլոկադա» բառը ամենատարածվածն է մարդկանց բառապաշարում: Դրժվար է դրան հավատալ, բայց մեր սոցիալիստական պետության մեջ միութենական հանրապետություններից մեկը հայտնվել է տնտեսական շրջափակման օղակում: Փակ են ավտոմոբիլային ուղիները: Կաթվածահար է երկաթուղին: Անհնարելի այդպիսի ակտ մեր պետության պատմության մեջ դեռևս չէր եղել:

Մի քանի օր առաջ, ստորագրելով կենտրոնական թերթերի խմբագրություններին ուղղված կոլեկտիվ նամակը, «Պրավդայի», «Իզվեստիայի», «Սոցիալիստիչեսկայա ինդուստրիայի», «Սովետսկայա կուլտուրայի», «Ստրոիտելնայա գազետայի», «Տրուդի», «Կոմսոմոլսկայա պրավդայի», կենտրոնական հեռուստատեսության և համամիութենական ռադիոյի թղթակիցները հույս ունեին, որ այն հրապարակվելուց հետո Հայաստանի կենսագործունեության երակները փակող մարդիկ ուշքի կգան: Կարելի է համակերպվել սենդի, արդյունաբերական ապրանքների պակասին, բայց, երբ ահավոր աղետից՝ երկրաշարժից փրկված հարյուր հազարավոր մարդիկ ստիպված կլինեն ձմեռել փաստորեն բաց երկնքի տակ, նման դրությունը ծնում է մարդկանց վրդովմունքն ու զայրույթը:

— Ցավոք «Պրավդայի» հրապարակումից անցած երեք օրվա ընթացքում քիչ բան է փոխվել,— գրույցի ժամանակ ինձ ասաց Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Լ. Սահակյանը:— Մեծ ճիգերի գնով հաջողվեց նախիջևանի ԻԽՍՀ ղեկավարությանը համոզել բացելու երթևեկությունը դեպի Հայաստան: Սակայն բանակցությունների մասնակիցները դեռ չէին հասցրել ցրվել, երբ, չանցած մի օր, ճանապարհը նորից փակվեց: Արդյունքում ստացվել է ընդամենը չորս բեռնատար գրենացք: Հանրապետության աշխատավորները ակամա հայտնվել են գործադուլավորների դերում: Շատ ձեռնարկություններ ուր որ է կանգ կառնեն: Չկա հումք: Շարունակվող տնտեսական շրջափակման հասցրած վնասը հանրապետությանը և երկրին արդեն հասնում է հարյուր միլիոնավոր ռուբլիների: Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանում, որն ընդհատել է իր աշխատանքը, ընդունվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված դիմում՝ շրջափակումը վերացնելու համար անհապաղ միջոցներ ձեռնարկելու պահանջով:

Իրավիճակը շատ ծանր է բոլոր իմաստներով: Սեպտեմբերի 21-ին հանրապետությունում լույս չի տեսել հանրապետական և կենտրոնական ոչ մի թերթ: Օգտագործված են լրագրային թղթի բոլոր պաշարները: Հանրապետության բնակիչները չեն ընթերցել ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարցով պլենումի էջերը, «Պրավդա» հրատարակչությունը Հայաստանի համար տպաքանակը տպագրել է Մոսկվայում և այսօր ցերեկվա ժամը 1-ին երթուղային օդանավով հասցրել իր բաժանորդներին:

Շարունակ «Պրավդայի» թղթակցային կետ են դիմում շինարարական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք երկրի ամենատարբեր ծայրերից եկել են աղետի գոտում օգնություն ցուցաբերելու:

Սպիտակից հաղորդում են. նորվեգական մասնագետները, որոնք շահագործման էին պատրաստում 200 տեղանոց հիվանդանոցը, որոշել են մեկնել առանց աշխատանքներն ավարտելու: Ամսից ավելի է, նրանք չեն ստանում իրենց սեփական բեռները, խախտվում են աշխատանքների ավարտի բոլոր ժամկետները:

Հանրապետությունում իրադրությունը ստանում է դրամատիկ բնույթ: Խանութներից անհետացել են մակարոնը, վերմիշելը, բրինձը, ինչպես նաև ձավարեղենը, լուցկին: Առայժմ ժողովրդի հանգստությունը պահպանել հաջողվում է հանրապետության կառավարության կողմից ձեռնարկվող արտակարգ միջոցների շնորհիվ: Սակայն լարվածությունը քանի գնում ուժեղանում է:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
(«Պրավդայի» թղթակից)

Ք. Երևան

«Պրավդա», 22 սեպտեմբերի 1989 թ.